

Մ Ո Ւ Ր Ա Ց Կ Ա Ն



ճուառ ու ցաւագար լինելովն հանդերձ՝ նա իւր կենաց մէջ լաւագոյն օրեր տեսել էր :

Տանեհհինգ տարեկան հասակին, կառք մի նորա երկու ոտքերը խորտակած էր վարվիլի մեծ ճանապարհին վերայ : Այդ օրէն 'ի վեր' խեղճ խեղանդամ կը մուրաբ ճամբաներուն վերայ կամ կալուածոց բակերուն մէջ տատանելով իւր փայտէ նեցուկներուն վերայ, որք նորա ուսերը մինչև ականջներն հասուցել էին. իսկ գլուխը՝ կարծես երկու լերանց մէջ միտած էր :

Նորածին մանուկ հասակէն փոսի մի մէջ գտել էր զնա Բիլէտի ծողւ վրբգապանս, Մեռելոց տօնին նախընթաց օրն, և այդ պատճառաւ Նիկողայոս՝ Ամենաօրբոց (Toussaint) անուամբ մկրտուած էր : Ողորմութեամբ մեծցած էր, առանց բնաւ կրթութիւն ստացած լինելու : Հաշմանդամ մնացել էր, իբր թէ գեղի հացագործին հարկած քանի մի գաւաթ օղին խմելէն յետոյ — ծիծաղաշարժ գէպք — և այդ օրէն 'ի վեր ողորմութիւն ինդրելէ զատ ուրիշ բան չէր գիտցած :

Ատենաք Գլխառի բարնուհին թող կու տար, որ երթար ննջէր դղեկին կից կալուածում, տեսակ մի յարգաւ լից խշտեկի վրայ, հաւնոցին քով : Այդպիսով նա վստահ էր, որ սաստիկ քաղցածութեան օրերում, կարող էր միշտ գտնել խոհանոցին մէջ կտոր մի հաց և մէկ գաւաթ խնձորօղի : Շատ անգամ այնտեղը քանի մի սուկա ձեռք կը բերէր, զոր ծեբ տիկինը պատշգամէն, կամ իւր սենեկին պա-

տուհանէն վար կը նետէր : Այժմ սա ևս մեռած էր :

Գեղերուն մէջ հազիւ երբէք ողորմութիւն կու տային անոր, զի պէտք եղածէն աւելի կը ճանաչէին զինքը : զգուել էին անկէ, քառասուն տարիէ 'ի վեր տեսնելով նորա շրջիլն խըրճիթէ խրճիթ, իւր պատառոտուն ու այլանդակ մարմնովն՝ երկու փայտէ թաթերու վերայ կոթնած : Մականջ չուզեր հեռանալ երթալ ուրիշ տեղ, քանզի աշխարհիս երեսն այդ անկիւնէն զատ ուրիշ տեղ չէր ճանցած բաց ի այդ երեք, կամ չորս գիղիկներէն՝ որոց մէջ իւր ցաւալից կեանքըն անցուցել էր : Նա իւր մուրացկանութեան համար որոշած սահմաններ ունէր, որոցմէ անդին սովորած չէր բնաւ անցնելու :

Չգիտէր նա, թէ աշխարհս կը տարածուի գեռ այն ծառերէն անդին՝ որք իւր աչաց տեսանելի էին : Այդ մասին մտածած չէր իմանալու : Եւ երբ գիւղացիք, ձանձրացած զինքը միշտ տեսնելով իրենց դաշտերուն եզերաց, կամ դար ու փոսերու երկարութեամբ, կը գոչէին : « Փոխանակ այս տեղ անդադար մուրալու, ինչու չես երթար ուրիշ գեղեր » : Նա առանց նոցա պատասխան տալու՝ կը հեռանար, սբտի աղօս վախով մ'առ անծանօթն, այն է աղքատ մարդու այն յատուկ երկչոտութեամբն՝ որ հազար ու մէկ բանէ կը զարհուրի, նոր գէմբերէ, նախատինքէ և անծանօթ մարդոց կասկածոս նայուածքներէն : իսկ հապա ծանդարմներն, որ զոյգ զոյգ ճանապարհաց վերայ

կ'երթ եւեկեն, և որոց երևոյթն արդէն իսկ բնազդմամբ մի կը ստիպէր զնա ապաստանիլ թուփերու մէջ, կամ խը-
ճակոյտերու ետև:

Երբ հեռուէն կը նշմարէր ժան-
դարմանքն՝ արևու լուսէն փայլիլուն
նշանազգեստներով, յանկարծ վրան
անսովոր արագութիւն մի կու գար,
վայրի արագութիւն՝ թաքստոց մի
գտնելու: Իւր ննցուկներէն վարկ'ոտ-
նայր, քուրչի պէս կ'ընկներ, թաւա-
զլոր ման գալով. փոքրիկ անտեսա-
նելի կը դառնար՝ գետնին կպած՝ որ-
պէս նապաստակն յորջի, խառնելով
իւր գորշագոյն հնտալիք գետնին հետ:

Սակայն և այնպէս նա երբէք նոցա
հետ գործ ունեցած չէր. բայց այդ
ահն և խորամանկութիւնն՝ արեան մէջ
կը կրէր, կարծես ժառանգած լինէր
ի ծնողաց, զորս չէր ճանաչած ընաւ:

Չունէր նա ո՛չ տուն, ո՛չ խրճիթ և
ոչ ապաստանարան. ամառը՝ հանդի-
պած տեղը կը ննջէր, իսկ ձմեռը՝ ցո-
րենի շտեմարաններու և կամ գոմե-
րու մէջ կը սպրդէր զարմանալի ճար-
պիկութեամբ ու կը թողուր կը հե-
ռանար միշտ՝ առանց աչքի զարնուե-
լու: Շէնքերուն մէջ մտնելու համար՝
ամեն ծակ ու ծուկ գիտէր. նեցուկ-
ներուն գործածութեամբ զարմանալի
ուժեղ բազուկներ ունենալով՝ կը մա-
րդլցէր լոկ ձեռաց ուժով մինչև խոտ-
նոցները, ուր կը մնար երբեմն չորս
հինգ օր անշարժ, եթէ բաւական
պաշար ժողոված լինէր իւր շրջա-
գայութեանց միջոցին:

Թէպէտ մարդկանց մէջ էր՝ այլ
անտառային անասնոց նման կ'ապրէր,
առանց մարդ ճանաչելու և սիրելու,
գեղացւոց վերայ ազդելով տեսակ մի-
անտարբեր արհամարհանք և սովորա-
կան թնամութիւն: Նորա անունը
դրել էին « Քլօշ », որովհետև իւր եր-
կու ցուպերուն մէջ կը տատանէր նա՝
որպէս զանգակն՝ իւր հաստարանաց
մէջ:

Երկու օրէ 'ի վեր բերանը բան
դրած չէր: Այլ ևս ողորմութիւն
առնող չկար. վերջ 'ի վերջոյ չուզէին
զինքը տեսնել: Գեղջկուհիք՝ դրանց
մէջ կեցած՝ տեսնելով նորա գալը հե-
ռուէն, կը գոչէին. — « Գնա՛ հեռա-
ցիւր աստի, թշուառական, դեռ երեք
օր է որ հացի կտոր մի տուել էի
քեզ »:

Եւ նա նեցուկներուն վերայ ման
գալով, կ'երթար դրկից տունը՝ ուր
և նոյն կերպով կ'ընդունէին:

Կանայք՝ բացէ ի բաց կը զրու-
ցէին դռնէ դուռ, թէ « կարելի՞ է
արդեօք կերակրել այդ ծոյն ամբողջ
տարին »:

Սակայն ծոյլը կ'ուզէր ուտել ամեն
օր:

Սուրբ — Հիլար, վարվիլ ու Բիլետ
գիւղօրէքը շրջել էր նա՝ առանց սան-
տիմ՝ մի կամ հացի չոր կեղևանք
ձեռք ձգելու: Միակ յոյսը դրած էր
Տուրնոյ գիւղին վերայ. բայց այնտեղ
հասնելու համար՝ երկու փարսախս ճա-
նապարհ հարկ էր կտրել, իսկ ինքն
չարաչար յոգնած էր ու անկարող այլ
ևս յառաջելու՝ վասնզի փորն իւր գըր-
պանին պէս դատարկ էր:

Սակայն և այնպէս ճանապարհ ըն-
կաւ:

Գիւտեմբեր ամիսն էր. ցրտաշունչ
քամին կը փչէր դաշտերէն՝ հծծելով
մերկ ճիւղերուն միջէն. ամպերը ցած
ու մնայլ երկնից երեսէն կը վազէին,
կը շտապէին չգիտես ո՛ւր: Հայման-
դամբ կ'երթար յամբաքայլ, իւր նե-
ցուկները մեծաւ դժուարութեամբ
փոխադրելով մին միւսին ետեէն, իւր
միակ ոլորեալ սրունքին վերայ յենլով՝
որոյ հաշմ՝ ոտը լաթերով փաթա-
թուած էր:

Երբեմն կը նստէր փոսի մի եզրը
ու շունչ կ'առնուր քանի մի վարկեան:
Անօթութիւնը սաստիկ չարչարանք
կու տար նորա խռովեալ ու տարտամ
հոգւոյն: Մի միայն « ուտելու » վերայ

կը մտածէր, բայց չգիտէր, թէ ի՞նչ հնարքով ուտէ:

Երեք ժամ չարչրկուեցաւ երկար ճանապարհին վերայ. հուսկ յետոյ տեսնելով գիւղին ծառերն՝ սկսաւ աւրագ յառաջել:

Իւր դիմաց ելնող առաջի գիւղացին՝ յորմէ ողորմութիւն խնդրեց՝ աւագ անոր:

« Դարձեալ երևցար, հինաւուրց թափառական, ուրեմն քու ձեռքէդ ամենևին աչատելու չե՞նք »:

Քրօջ հեռացաւ գնաց: Դռնէ դուռ կոչաւ ու կոպիտ կերպով վարեցին զինքը՝ առանց օգնելու: Սակայն և այնպէս համբերութեամբ ու յամառօրէն կը շարունակէր իւր պտոյտը. սու մի անգամ՝ չկարողացաւ ձեռք ձգել:

Այն ատեն գնաց կալուածները, յառաջելով անձրևէն կակիտացած գետնին վերայ. այն աստիճանի յոգնած, որ այլ ևս անկարող կը զգար ցուպերը վերցնելու: Ամէն տեղէ վառտեցին ու քշեցին: Այդ օրը՝ ձմերային այն պաղ ու տխրագէմ՝ օրերէն մէկն էր. որ մարդոց վերայ սրտնեղութիւն կը բերէ, միտք կը զայրանան, հոգին կը մառյլի և մարդու ձեռքը չի բացուիր ոչ տարու և ոչ օգնելու:

Երբ իւր գիտցած բոլոր տուներն այցելեց, գնաց նեցուկներէն վար սահելով նստաւ փոսի մի անկիւնը, Շիքէ գեղացւոյն բակին մէջ. երկար ատեն անշարժ մնաց սոփատանջ, բայց չափազանց տխմար իւր թշուառութեան խորութիւնն իմանալու: Նա կը սպասէր — առանց գիտնալու ի՞նչ բանի, — այն աղօտ ակնկալութեամբ՝ որ յատուկ է միշտ մարդու: Այդ բակին անկիւնը կեցած՝ սառնաշունչ քամիին ներքև, նա կը սպասէր այն խորհրդաւոր օգնութեան, զոր միշտ կը յուսան մարդիկ երկնքէն, կամ մարդոցմէ, առանց մտածելու, թէ ի՞նչպէս այդ օգնութիւնը կարող է հասնիլ:

Եւ ահա սև հաւերու երամ մի կ'անցնէր, փնտուելով իրենց ուտելիքը հողին մէջ, որ սննդատու է ամենայն արարածոց: Երբեմն երբեմն, կտուցի հարուածով կը կորզէին անտեսանելի հատիկ մի և կամ միջատ մի, յետոյ կը շարունակէին իրենց փնտուցքը դանդաղ ու փտահ հայլերով: Քրօջ կը նայէր անոնց վերայ՝ առանց բան մի մտածելու. յետոյ աւելի տտամբւսին քան թէ գլխուն մէջ ծագեցաւ այս զգացմունքս, քան թէ խորհուրդ, թէ այս թռչուններէն մին՝ ընտիր կերակուր պիտի լինէր, չոր փայտի վերայ խորովուած:

Մտքէն իսկ չանցաւ բնաւ, թէ գոյութիւն էր անելիքը:

Քար մի առաւ ու, — ճարպիկ լինելուն շնորհիւ, — սպաննեց մէկ հարուածով ամենամերձ հաւը, որ խկոյն կողի վերայ գլորեցաւ, թեկերը շարժելով: Միւս հաւերը փախան իրենց բարակ մազիկներուն վերայ տատանելով, Քրօջը կրկին նեցուկներուն վերայ բարձրացաւ, և հաւերուն նման ասդիս անդին շարժելով՝ գնաց իւր որսը վերցնելու: Հաղիկ թէ արիւնտուած գլխիկով սև մարմնոյն մտնեցել էր, այնպիսի ուժգին հարուած մի կպաւ կունկին, որ թողով ձեռքի փայտերը՝ տասը քայլ անդին գլորեցաւ: Շիքէ գեղացին էր, որ այլքը մութ կոխած, յարձակելով աւարառուին վերայ, սկսաւ հարուած հարուածի վրայ իջեցնել ու ձեռքը զնա մոլեգնանքի նման, ինչպէս հասարակօրէն որ և է կողոպտուած գեղացի՝ կը ծեծէ ծունկերուն վրայ ակսիթեբոս ընկողին բոլոր մարմինը, որ չէր կարող ինքն իրեն պաշտպանել:

Կալուածի միւս ծառաներն ևս վրայ հասան ու սկսան տիրոջ հետ բզբկտել զմութացկանն: Երբ յոգնեցան ծեծելէ, վերուցին ու տարին փակեցին փայտանոցը՝ մինչև ժանդարմներուն գալը:

Քրօշը կիսամեռ, արիւնլուայ, սովարեկ պառկած մնաց գետնին վերայ: Գուրսը մթնցաւ, գիշերը կռիւնց և ապա արշալոյսը ծագեցաւ: Իսկ Քրօշ դեռ ոչինչ կերած չէր: Աէսօր ատեն, ժանդարմները եկան, զգուշութեամբ բացին դուռը ընդգիւմադրութենէ վախնալով, քանզի գիւղացին յայտնած էր, որ մուրացկանին յարձակմանց դէմ դժարութեամբ կարողացել էր պաշտպանուիլ: Ժանդարմներուն գլխաւորը կանչեց. « Է՛հ, ոտքի կանգնէ »:

Բայց Քրօշ չէր կարող տեղէն շարժիլ. շանաց բարձրանալ իւր փայտերուն վերայ, բայց չկարողացաւ: Կարծեցին թէ կը կեղծէ, կը խաբէ, յամառութիւն մի է չարագործի. ուստի երկու զինուորեալ մարդիկ նախատելով բռնեցին ու բռնի կանգնեցուցին նեցուկներուն վերայ:

Վախը տիրել էր նորա վերայ, այն բնածին վախը՝ զոր թափառաշրջիկն կը զգայ ժանդարմներուն՝ այն է, իրեն որսորդներուն առջև, ինչպէս մուկը կատուին առջև: Ուժ ու սիրտ մէկ անելով կրցաւ ոտքի վերայ կենալ:

« Յառաջ », ասաց ժանդարմը: Քրօշ հնազանդեցաւ: Բոլոր կայուածին մարդիկ անոր երթալը կը գիտէին. կանայք՝ բռունցք կը ցուցնէին. էրիկ՝ մարդիկք կը ծաղրէին ու կը հայհույէին զնա. « վերջապէս ձերբակալել էին զնա, ազատել էին ձեռքէն »:

Նա հեռացաւ, երկու պահապաններուն միջէն յառաջելով. դեռ մինչև

երեկոյ քալելու ուժ ճարեց, յուսակը սուր ուժ. տխմարացած, առանց գիտնալու, թէ ինչ հանդիպել էր իրեն, այնքան ապշած ու շուարած՝ որ ոչինչ չէր հասկնար:

Հանդիպող մարդիկ՝ կը կանգնէին անոր անցնիլը գիտելու համար, և գեղացիք կը մոմաւային, թէ « Անշուշտ գող մի է »:

Գիշեր ատեն հասան վերջապէս տեղոյն գլխաւոր քաղաքը: Յիրաւի չէր կարող մտաբերել, թէ ինչ եկաւ գլխուն և կամ ինչ կարող էր դեռ պատահել: Բոլոր այդ սարսափելի և յանկարծական դէպքերը, այդ նոր նոր դէպքերն ու տունները սարսուռ կ'ազդէին իւր վերայ:

Բերնէն մէկ խօսք չելաւ. որովհետեւ ասելու բան չունէր. վասն զի այլ ևս բան չէր հասկնար: Մէկ մ'ալ որ այնքան տարիէ 'ի վեր մէկի հետ չխօսելուն պատճառաւ՝ գրեթէ խօսակցութեան սովորութիւնն իսկ մոռցած էր. և իւր մտածութիւնն այնքան պղտոր, որ խօսքերով իսկ չէր կարող արտայայտել:

Փակեցին զինքը քաղաքին բանտը: Ժանդարմները չի մտածեցին անգամ, որ թերևս պէտք ունէր ուտելու, և այնտեղ թողուցին մինչև առաւօտ:

Բայց երբոր եկան արշալուսին հարցուփորձ անելու, գետնին վերայ ընկած մեռած գտան:

Զարմանք բան:

Գիշ զը Մօպասան:

Թարգմ. Մ. Ռ. Թիմիճեան:

